նշված ընթացակարգով հրավիրված մրցույթին <<Կոնցեռն-Էներգոմաշ>> ՓԲԸ-ն ներկայացրած է եղել նույնաբովանդակ փաստաթղթեր ինչ վիճարկվող պարագայում, ապա Դատարանն արձանագրում է, որ ներկայացված հայցը հիմնավոր համարելիս հիմք է ընդունվում նաև այդ հանգամանքը:

Նման պայմաններում Դատարանը գտնում է, որ հայցը ենթակա է բավարարման և պետք է անվավեր ճանաչել (վերացնել) <<Երևանի պետական համալսարան>> հիմնադրամի 21.10.2022թ.-ին կայացված որոշումը (գրությունը) ամբողջությամբ՝ <<Կոնցեռն-Էներգոմաշ>> ՓԲԸ-ի նկատմամբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության միջոցը կիրառելու մասով:

<u>Դատական ծախսերից պետական տուրքի բաշխման հարցի լուծում.</u>

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Տվյալ դեպքում Դատարանը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայցը բավարարվում է, իսկ պետական տուրքը նախապես վճարվել է հայցվորի կողմից՝ գտնում է, որ պատասխանողից հօգուտ հայցվորի ենթակա է բռնագանձման 50.000 ՀՀ դրամ՝ որպես վճարված պետական տուրքի գումար:

<u>Հայցի ապահովման միջոցի պահպանման մասով.</u>

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցը բավարարելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի կատարումը:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայցը բավարարվում է՝ Դատարանը գտնում է, որ ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 05.01.2023 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պետք է պահպանել մինչև վճռի կատարումը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-192-րդ, 198-րդ հոդվածներով, Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

<<Կոնցեռն-Էներգոմաշ>> ՓԲԸ-ի հայցն ընդդեմ <<Երևանի պետական համալսարան>> հիմնադրամի, երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության՝ որոշումը անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին, բավարարել:

Անվավեր ճանաչել (վերացնել) <<Երևանի պետական համալսարան>> հիմնադրամի 21.10.2022թ.-ի որոշումը՝ <<Կոնցեռն-Էներգոմաշ>> ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

<<Երևանի պետական համալսարան>> հիմնադրամից հօգուտ <<Կոնցեռն-Էներգոմաշ>> ՓԲԸ-ի բռնագանձել 50.000 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար:

ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 05.01.2023 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պահպանել մինչև վճռի կատարումը:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ